ռութեամբ կնքվեցաւ նախ եկեղեցական կասսան և ապա երեցփոխանական սենեակը։ Հասարակութիւնը դիտաւորութիւն ունի մի խնդիրք ներկայացնել վիճակային կոնսիստորիային, որով պէտք է պահանջէ նախ՝ կարգել նոր հաշուատեսներ, որովհետև հին հաշուատեսները յաջորդարանի մէջ ժողովրդի առջև և յաջորդի ներկայութեամբ յայտնեցին որ տարէն 400-ական ռուբլ էին ստացել երեցփոխանից, երկրորդ՝ քննել և զննել ներկայացրած թղթերի կտորները, երրորդ՝ տեսնել ինն տարվայ երեցփոխանական հաշիւը։ Փառք Աստուծու որ մեր ախալցիսցիները սկսել են վերջապէս հասկանալ իրանց իրաւունքը և պաշտպանել իրանց շահերը։ Բայց արդէն կազմվել է մի կուսակցութիւն վանցեանցին պաշտպանելու համար։»

—

Այսօր լինելու է աճուրդ կապալով տալու համար Քամոյեանց եկեղեցու մօտ, եկեղեցական հողի վրա չինած տները։ Այդ տների պատմութիւնը այս է։ Տասն երկու տարի առաջ պ. Շաբուրովի Մակար եպիսկոպոսի համաձայնութեամբ յանձն առաւ չինել այդ տները և 12 տարի շարունակ ինքն չահվում էր ստանալով 3,000—4,000 ռուբլ տարեկան, իսկ եկեղեցուն վճարում էր 70 ռուբլ տարեկան կապալադրամ։ Այժմ նա կրկին աշխատում է կապալով վեր առնել այդ տները, բայց այս անգամ 60 տարով, առաջարկելով եկեղեցուն վճարել տարեկան կապալադրամ 600 ռուբլ։ Թիֆլիսի հայոց կոնսիստորիան Շաբուրովի կողմն է բռնում, երևի մի որ և է չահ ունելով այդ գործից։ Ցոյս ունենք որ ծխականները այսօր հաւաքվելով առաջնորդարան, կը խանգարեն Շաբուրովի դիտաւորութիւնները։ Արդէն այս օրերս մէկ ժողով է եղել այդ հարցի մասին և ծխականներից գրեթէ ոչ ոք չը կար, բացի պ. Շաբուրովի կուսակիցներից։ Լաւ բան է՝ ստանալ 4,000 ռուբլ տարեկան և վճարել 600 ռուբլ միայն։ Մեր հոգևոր իշխանութեան ներկայացուցիչները հոգում են ոչ թէ եկեղեցու օգուտների մասին, բայց իրանց անձնական շահերի մասին։ Երևի Մամբրէն հետևում է Մակար եպիսկոպոսի չաղին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

—

Անգլիական համայնքների ժողովը վերջացրեց չափազանց խըճճված և դժուար գործ. իրլանդական կալուածական օրէնքը արդէն քննված է մանրամասնաբար Գլադստոնի անմիջական առաջնորդութեամբ։

Երբ քննվեցան և մերժվեցան յօդուածների վերջին խմբագրութիւնները, ժողովի մէջ մեծ ծափահարութիւններ տեղացին 'ի պատիւ Գլադստոնի, որ այդ ժամանակ իր տեղից վեր էր կացել։ Առաջին մինիստրի յայտնութիւնը հերթական պարապմունքների վերջանալու և ժողովի նիստերի փակվելու մասին նոր ծափահարութիւններով ընդունվեցան։

Շատ քիչ է պատահել, որ մի որ և է ազգային ժողով այդքան աջողութեամբ և բարեխղճաբար աշխատէր, ինչպէս անգլիական համայնքների այժմեան ժողովը։ Աւելի էլ քիչ է պատահել որ և է ժողովին գործ ունենալ այդպիսի ընդարձակ և նշանաւոր սոցիալական վերանորոգութեան հետ, ինչպէս Գլադստոնի կալուածական օրէնքն է։ Ժողովը ստիպված էր քննել Իրլանդիայի կալուածական դրութեան բոլոր մանրամասները, պէտք է լսէր հետաքրքրված անձանց և մասնագէտների ընդարձակ ճառերը, պէտք է տանէր իրլանդական անհաշտ պատգամաւորների թշնամական յարձակմունքները և ուշադրութիւն չը դարձներ ընդդիմադրականների դրած արգելքների վրա։ Համայնքների ժողովը աջողութեամբ լուծեց այն խնդիրը, որ շատերը անլուծելի էին համարում մի քանի հարիւր անդամներից բաղկացած ժողովի համար։ Գլադստոնի օրէնսդրական նախագիծը մշակված է, բազմակողմանի քննութեան է ենթարկված, ուղղված և լրացրած է ժողովից ամենակատարեալ կերպով։ Օրինագծի մէջ ոչ մի խօսք չէ մնացել, որ կշռված չը լիներ պարլամենտից հասարակական կարծիքի և ազատ մամուլի անմիջական հսկողութեան տակ։

Այդ պատճառով համայնքների ժողովը իրաւունք ունէր յայտնել իր բաւականութիւնը գործի աջողութեամբ վերջացնելու առիթով։ Գափահարելով աշխատասէր մինիստր Գլադստոնին, ժողովը մի և նոյն ժամանակ գնահատեց և իր աշխատանքները։

Անգլիական պարլամենտի կատարած գործը մանաւանդ նշանաւոր է և այն պատճառով, որ կալուածական նոր օրինագիծը շոշափում էր կալուածատէրերի շահերը, որոնք ազդեցութիւն ունեն թէ համայնքների ժողովի և թէ երկրի մէջ։ Հարկաւոր էր անձնազոհութիւն տիրապետող տնտեսական նախապաշարմունքներից հրաժարվելու և օրէնսդրութեան մէջ այնպիսի մի նոր կենսական սկզբունք մտցնելու համար, որ կարող էր ազդել Անգլիայի հասարակական ապագայ կազմակերպութեան վրա։ Ֆրանսիայի գործիչներից շատերը պախարակում էին մի ժամանակ Գլադստոնի օրինագիծը, նրան փտանգաւոր համարելով կալուածական սեփականութեան սուրբ իրաւունքների համար։ „Journal des Débats“ լրագիրը ինքնահաւանութեամբ զգուշացնում էր Անգլիային Գլադստոնի ընտրած „փտանգաւոր“ ճանապարհի դէմ։ Լրագիրը իր անմեղ յօդուածներով ապացուցեց, որ նա բոլորովին ծանօթ չէ Իրլանդիայի կալուածական և երկրագործական իսկական դրութեան հետ։ Նոյնպիսի թերահամուութեամբ վերաբերվեցաւ Իրլանդիայի կալուածական վերանորոգութեանը „République Française“ լրագիրը, որ իրան հմուտ է համարում սոցիալական և տնտեսական գիտութիւնների մէջ։ Այս լրագիրը մինչև անգամ մանրամասն քննութեան չենթարկեց Գլադստոնի օրինագիծը, այլ բաւականացաւ ընդհանուր և կարճառօտ դատողութիւններով, որոնք թերահաւատութեամբ և կասկածանքով էին վերաբերվում այդ „համարձակ“ օրինագծին։ Այս կողմից անգլիական մամուլը աւելի հմուտ յայտնվեցաւ սոցիալական գիտութեան մէջ։

Համայնքների ժողովի վճիռը Տրանսվաալի մասին մի փառաւոր յաղթութիւն է համարվում Գլադստոնի համար։ Պահպանողական կուսակցութիւնը վաղուց պատրաստվում էր կառավարութեան արտաքին քաղաքականութեան վրա յարձակվելու համար և դրա համար նա աւելի լաւ առիթ համարեց Գլադստոնի քաղաքականութիւնը բոերների հետ, որոնք լորդ Բիկոնսֆիլդի ժամանակ կատարելապէս հնազանդեցրած էին անգլիական իշխանութեանը և որոնք այժմ բրիտանական զօրքերի անաջողութիւններից յետոյ կատարեալ անկախութիւն են ձեռք բերել, որովհետև այժմեան մինիստրութիւնը բոլորովին հրաժարվել է նուաճողական քաղաքականութենից։ Բիկոնսֆիլդի վաղեմի մինիստրութեան անդամ պ. Գիկս սաստիկ յարձակվեցաւ այժմեան կառավարութեան արտաքին քաղաքականութեան վրա։ Սկսվեցան վիճաբանութիւնները։ Գլադստոն մի ընդարձակ ճառով մանրամասնաբար մեկնեց իր բռնած ընթացքի շարժառիթները արտաքին քաղաքականութեան վերաբերութեամբ առհասարակ և Տրանսվաալի հարցի առիթով մասնաւորապէս։ Այդ ճառից յետոյ համայնքների ժողովը ձայների նշանաւոր մեծամասնութեամբ հաւանութիւն տուեց Գլադստոնի քաղաքականութեանը։

Դուբլինի մէջ կալուածական միութիւնը փողոցի վրա մի նշանաւոր ցոյց արաւ, որին մասնակցում էին մօտ 10,000 արհեստաւորներ։ Այնուհետև դրանք ժողով կազմեցին, որի ժամանակ խօսեցին պարլամենտի անդամներ Գիլի և Սեկստոն։ Նրանք քննադատում էին իրլանդական կալուածական նոր օրէնքը և ապացուցանում էին երկրագործներին, որ նրանք պէտք է հաւասար իրաւունքներ և սեփական հողեր ունենան։

Արտասահմանի մէջ զանազան ազգութիւնների պահպանողականները զարմանք էին յայտնում, որ անգլիական ներքին գործերի մինիստր Հարկօրտ, պահանջելով Միացեալ Նահանգների կառավարութենից խիստ միջոցներ գործ դնել ֆենիիների դէմ, ինքը ոչինչ կարգադրութիւն չարաւ Լօնդօնի մէջ հաւաքված սոցիալական ժողովի դէմ։ Երբ պարլամենտի մէջ մինիստրին հարց առաջարկվեց այդ առիթով, նա յայտնեց հետևեալ կարծիքը. „Եթէ յեղափոխական ժողովի նպատակը լինէր մեր երկրի մէջ կամ արտասահման որ և է յանցանք գործել, այն ժամանակ կառավարութիւնը պարտաւոր էր միջամտել, ի նկատի ունենալով, որ դատաստանական միջոցները կարող են օգտաւէտ պտուղներ տալ։ Բայց կառավարութիւնը իրաւունք չունէր միջամտել, որովհետև ժողովի մէջ միայն կարծիքներ էին յայտնվում։“ Սրանից երևում է, որ անգլիական կառավարութիւնը չէզոք է մնում, երբ միայն կարծիքներ են յայտնվում և միջամտում է գործին միայն այն ժամանակ, երբ որ և է յանցանք է պատրաստվում։

—

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լրագիրները հաղորդում են, որ Կ. Պոլսի հայ կաթոլիկների Ազգային կաթողիկոսը այս օրերս ներկայացաւ սուլթանին և սուլթանը չընորհեց նրան մեջիդիէի պատուանշանը։

—Ամերիկայից հեռագրում են լրագիրներին, որ Գարֆիլդ նախագահի առողջանալու համար բժշկները երաշխաւոր են։

—Անգլիայում, Գլազկոի մէջ գտան դինամիտի մեծ պահեստ։ Դուբլինից գրում են որ կալուածատէր Զվարտէն վիրաւորված է ռէվոլվերով։

—«Голосъ» լրագրի Բերլինի թղթակիցը հաղորդում է որ իշխան Բիսմարկ ստացել է անյայտ անձինքներից սպառնալի անանուն նամակներ։ Նրան իր ամրողջ սերունդով սպառնում են ոչնչացնել։

—Սոֆիայից հեռագրում են, որ գեներալ Էրնրոթ կը վերադառնայ Սոֆիա։ Այս օրերս հասաւ Բոլգարիա ինժինէր Սորովէ բանակցելու համար Բոլգարիայում երկաթուղիներ չինելու նպատակով։

—«Temps» լրագրին հեռագրում են Բերլինից որ դարձեալ եօթ սոցիալիստներ աքսորված են Լայպցիգից։

—Հաստատվում է որ Միդհատ փաշան կաքսորվի Բոդոս կղզին։

—Լօնդօնի մի քանի լրագիրները հաւատացնում են որ անգլիական կառավարութիւնը հրամայել է պոլիցիային տեղեկանալ թէ ովքեր են մասնակցել Լօնդօնում նորերումս կայացած սոցիալիստների ժողովին և դիտաւորութիւն ունի դատի ենթարկել ժողովի գլխաւոր մասնակցողներին։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսում կանաչք և երեխաները վերջին պատերազմի մէջ սպանված զինուորների ամեն օր անհանգստացնում էին ֆինանսների մինիստրին, պահանջելով իրանց խոստացված նիւթական օժանդակութիւնը։ Բայց տեսնելով որ բոլոր աղաչանքները զուր էին, մի օր, երբ մինիստրը դուրս էր գալիս դիւանատանից, կանայք շրջապատեցին նրան և փայտերով սաստիկ ծեծեցին նորին գերազանցութեանը։ Այդ անցքից յետոյ փողը իսկոյն տրվեցաւ նրանց։ Կանայք տեսնելով որ այդ միջոցով բաւականութիւն ստացան, դիտաւորութիւն ունեն ամեն տարի ֆինանսների մինիստրի հետ այդ ազդու միջոցը գործ դնելու։

***

Վիէննայի Իոզէֆշտադտի թատրոնում օրկէստրի կառավարիչը արձակեց իր օրկէստրի բոլոր մարդկանց և նրանց տեղ հրաւիրեց երաժիշտ կանանց և օրիորդներին, որոնք երաժշտական բարձրագոյն դպրոցի մէջ իրանց ուսումը աւարտած են։ Ներկայացման ժամանակ այդ երաժիշտ կանայք միշտ հագնված են լինում սև զգեստներով, առանց որ և է զարդարանքի։

***

Թիֆլիսում սարսափելի կերպով բազմացել են վերջին ժամանակներ զանազան հրապարակական այգիներ երգիչներով, երգչուհիներով և գիմնաստներով և գեղեցիկ կանանցով։ Օրկէստրի հնչիւններից ոգեւորվելով մեր զանազան դասակարգերի նոր սերունդը ամեն գիշեր անցնում է իր ժամանակը այդ տեսակ այգիներում, ուտելով, խմելով, կարողութենից վեր փողեր վատնելով, մեծ մասամբ քնքոյշ սեռի յայտնի ներկայացուցիչների հասարակութեան մէջ։ Մի որ և է առևտրական գործակատար, որ ամիսը մի 50 ռուբլ ռոճիկ է ստանում, ծախսում է ամեն երեկոյ 10 մինչև 15 ռուբլ։ Հարցնող լինի՝ որտեղից է ճարում նա այդ փողերը, որ ամիսը կանի 300 ռուբլուց աւելի, եթէ ոչ գողանալով իր տիրոջից։

***

Մի քանի ժամանակ սրանից առաջ մի հայուհի, Նազիկ Միսակեան անունով, եգիպտական խեդիվի հարեմից փախել էր Նէապոլ։ Զը նայելով խեդիվի բոլոր աշխատութեանը յետ դարձնել փախստականին Իտալիայի պոլիցիայի միջոցով, այդ նրան չաջողվեցաւ։ Նէապոլում հայուհին ծանօթանում է մի հարուստ երիտասարդի հետ և պսակվում։ Հարսանիքից առաջ Նազիկը պատրաստել է տալիս հրաւիրատոմակներ և ուղարկում է խեդիվի հարեմը իր բարեկամուհիներին, հրաւիրելով հարսանիք։ Խեդիվը—Իզմայիլ փաշան նամակները ստանալուն պէս ոչնչացնում է, բայց նրա հարեմի գեղեցկուհիք կողմնակի կերպով տեղեկանում են փախստական Նազիկի նախանձելի վիճակի մասին և այն օրից Իզմայիլ փաշան ստիպված է աւելի խիստ կերպով հսկել իր հարեմի վրա։

***

Այժմ բոլորի ուշադրութիւնը իր վրա է դարձնում Իշխանուհի Հուսէյն, Իզմայիլ փաշայի երկրորդ որդու կինը։ Իշխանուհին իր բոլոր սեամորթ ծառաներին սպիտակ զգեստ է հագցրել, նրա կառքի սև ձիաների սարքը պատրաստված է սպիտակ կաշուց արծաթեայ զարդարանքներով, իսկ կառքի ներսը պատած է սպիտակ մետաքսեայ կերպասով։ Այդ կերպ զարդարած կառքի մէջ նստած և շրջապատված սեամորթ, սպիտակազգեստ ծառաներով, իշխանուհին շրջում է քաղաքի փողոցներում, ուշադրութիւն չը դարձնելով ժողովրդի զարմանքի և կրօնապաշտ մահմեդականների դժգոհութեան վրա։ Իշխանուհու սկեսրայրը, նախկին խեդիվը, որ այժմ ապրում է Նէապոլում, խիստ յանդիմանել է իր հարսին հրամայելով նրան անյապաղ փոխարինել սպիտակ գոյնը մոգ գոյնով, մնացած իշխանուհիների սովորութեան համեմատ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 յուլիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. երկրորդ 94 ր. 62 կ., երրորդ 94 ր., չորրորդ 94 ր. 37½ կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 225 ր., երկրորդ 223 ր. 75 կ., արևելեան առաջին փոխարութեան տոմսակը արժէ 91 ր. 75½ կ., երկրորդ 92 ր. 75 կ., երրորդ 91 ր. 7 կ., ոսկի 7 ր. 80 կ.։ Ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 219 մարկ, 27 պֆ.։ Բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ